ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 2234-Ա « 19 » հունիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՆՈՐԱԳԱՎԻԹ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ Հ.14 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐԺԻԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անդրանիկ Սերժիկի Մելքոնյանի (ծնված 27.12.1967թ.) դիմումը: Երևան, Շենգավիթ, Նորագավիթ 4-րդ փողոց 1-ին նրբանցք հ.14 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 612.59քմ, որից 490քմ մակերեսով հողամասը Անդրանիկ Սերժիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 15.02.2023թ. հ.ԱՏ-15022023-01-0879, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 04.10.2023թ. հ.13434 գրությունները, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 14.10.2022թ. հ.13174 վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 11.04.2024թ. հ.20-Ել-Դ-124028-22 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Շենգավիթ, Նորագավիթ 4-րդ փողոց 1-ին նրբանցք հ.14 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևան, Շենգավիթ, Նորագավիթ 4-րդ փողոց 1-ին նրբանցք հ.14 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անդրանիկ Սերժիկի Մելքոնյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 490քմ մակերեսով հողամասին կից 122.59քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 122.59քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան, Շենգավիթ, Նորագավիթ 4-րդ փողոց 1-ին նրբանցք հ.14 հասցեում գտնվող 612.59քմ, հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ